

**Պատասխաններ**

**11 -րդ դասարան**

Ա.

1. **Ասպ-ծագում** է հին պարսկերենից և նշանակում է **ձի**

**ասպարեզ**

1. Գործունեության, զբաղմունքի բնագավառ:
2. Գործունեության, զբաղմունքի հնարավորություն:
3. Զանազան մարզանքների, մրցումների, խաղերի հրապարակ, մրցարան:
4. Կրկեսի ավագածածկ շրջանաձև հրապարակը (արենա):
5. Միջավայր, շրջապատ:
6. (պատմական) Ձիարշավարան:
7. (հին) երկարության չափ = 600 հունական ոտնաչափի:

2. **ասրյա-բրդից** պատրաստված

**աշտե**-երկարակոթ նիզակ

**կապարճ**- նետ պահելու փայտե կամ կաշվե աման

3. **կապարճ, աշտե, գեղարդ, տապար,...**

4. **ակ**

1. Թանկագին քար:

2. Մատանու վրա ագուցված կամ զանազան իրերի, զարդերի ևն վրա ամրացված քար:

5. **սփռել** < **զ+փռել**

**սքողել** < **զ+քողել**

6. **ընչացք-բեղ, ունչ>ընչ, ու>ը**

7. **դիպակ** – կերպաս

**ընդելուզվել**-ագուցվել

8. **երկնքի աչքեր**

Բ. **Հիվանդ ոչխարն առողջ գազանից նախընտրել:**

**Յուրային թեկուզ թույլ դեկավարին նախընտրել:**

Ըստ Սահակ Պարթևի .«Եվ ինչպե՞ս կարելի է փոխանակել իմ հիվանդ ոչխարն առողջ գազանի հետ, որի հենց առողջությունը մեզ համար պատուհաս է»: Կաթողիկոսը սա ասել է նախարարներին ,որոնք առաջարկում էին վերջին Արշակունի թագավորին գահընկեց անելու համար պարսից արքունիքին դիմել: